

Բյուրակն

Վարչական ղեկավար՝ Սարգսյան Սեյրան

Հեռ +374 093-99-66-36

Մակերես՝ 24կմ²

Բնակչություն՝ 797

byurakn.shirak@mta.gov.am

Գյուղ Ամասիայի տարածաշրջանում, Ամասիայից 12կմ հարավ-արևմուտք, մարզկենտրոնից գտնվում է 16կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Գյուլիբուլաղ Թուրքի, Գյուլիբուլաղ Կարափափախ անվանումները:

Գյուղը տեղադրված է Շիրակի դաշտի հյուսիս-արևմուտքում, Ախուրյան գետի աջակողմյան գետահովտում՝ ծովի մակարդակից 1730մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաբքերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 600-700մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստանները: Ունի աղբյուրներ, որոնք օգտագործվում են որպես խմելու ջուր:

1897 թ-ին գյուղն ունեցել է 958, 1926 թ-ին՝ 1142, 1939 թ-ին՝ 1388, 1959 թ-ին՝ 1529, 1970 թ-ին՝ 2459, 1979 թ-ին՝ 2580 բնակիչ, գերազանցապես հայեր: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2013թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 797 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 47%, կանայք՝ 53%: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ.

մինչաշխատունակներ՝ 29%, աշխատունակներ՝ 51%, հետաշխատունակներ՝ 20%: Ունի 169 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, բուժկետ, կապի հանգույց:

Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը անասնապահությունն է: Գյուղատնտեսական հողահանդակները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր՝ կազմելով 1066հա: Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, արոտավայրեր՝ կազմելով համապատասխանաբար 243 և 561 հեկտար: Զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությամբ, թռչնաբուծությամբ: Զբաղվում են նաև հացահատիկային, բանջարաբոստանային, կերային կուլտուրաների, կարտոֆիլի մշակությամբ:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցական գույքի նորացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, գազաֆիկացումը:

ՀՀ Շիրակի մարզ, գ. Բյուրակն

Ինդեքս՝ 2706